



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 փետրվարի 2017 թվականի N 79 - Ն

ԱԶԳԱՅԻՆ ԴԵՂԱՄԱՏՅԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել ազգային դեղամատյանը հրապարակելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. փետրվարի 3
Երևան



Կ Ա Ր Գ

ԱԶԳԱՅԻՆ ԴԵՂԱՄԱՏՅԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ

1. Ազգային դեղամատյանը «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմնական դեղերի մասին տեղեկություններ (անատոմիական-բուժական-քիմիական ծածկագիր, դեղի ակտիվ և օժանդակ նյութերի բաղադրակազմ, կիրառման վերաբերյալ ցուցումներ, հակացուցումներ, նախազգուշացումներ, դեղաչափման տվյալներ, այդ թվում՝ տարբեր տարիքային խմբերում և հատուկ խմբերի պացիենտների շրջանում կողմնակի ազդեցությունները, դեղի փոխազդեցություններն այլ դեղերի և սննդի հետ, կիրառման կարգը հղիության և կրծքով սնուցման ժամանակաշրջանում, ինչպես նաև՝ երեխաների ու ծերերի շրջանում, դեղի պահման և ոչնչացման պայմանները) ընդգրկող տեղեկատուն է, որը հրապարակվում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ՝ հրապարակման տարվա հունիս ամսին:

2. Ազգային դեղամատյանի հրապարակումը՝ էլեկտրոնային եղանակով (պատկերամուտի տարբերակով) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (www.moh.am) տեղադրումն է գիրք-տեղեկատուի տեսքով՝ դրա համար նախատեսված հատուկ դարանում:

3. Առողջապահության նախարարությունն ապահովում է նաև ազգային դեղամատյանում ընդգրկված դեղերի վերաբերյալ մշտապես առցանց թարմացվող համացանցային

հիմնապաշարի վարումը՝ հնարավորություն տալով ստանալու տեղեկատվություն յուրաքանչյուր համընդհանուր անվանմանը համապատասխան գրանցված դեղի մասին:

4. Ազգային դեղամատյանի հրապարակումից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը պաշտոնական մամլո հաղորդագրություն է տարածում ազգային դեղամատյանի հրապարակման վերաբերյալ՝ նշելով տվյալներ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում դրա տեղադրման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

